




UN COVID-19 Response  
and Recovery Fund  
#RecoverBetterTogether

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույց «Safe YOU» բջջային  
հավելվածի շահագրգիռ կողմերի  
համար՝ ուղղված գենդերային  
բռնության հետ կապված թվային  
բովանդակության ստեղծմանը և  
կանանց ու դեռահաս աղջիկներին  
գենդերային բռնությունից  
պաշտպանելուն



Սույն ուղեցույցը պատրաստվել է «ՄԱԿ Կանայք» կազմակերպության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՄԵՖ) կողմից՝ ՄԱԿ-ի համատեղ «Կանանց հզորացման արագացում՝ հանուն տնտեսական կայունության և նորացման. Հայաստանում COVID-19-ից հետո վերականգնում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻԴՅՈ-ի, ՅՈՒՆԻՄԵՖ-ի և «ՄԱԿ Կանայք»-ի կողմից: Այս համատեղ ծրագիրը հնարավոր է դարձել Նիդեռլանդների, Դանիայի, Շվեյցարիայի, Նորվեգիայի, Շվեդիայի, Կորեայի Հանրապետության, Ֆինլանդիայի, Նոր Զելանդիայի, Խորվաթիայի, Իսլանդիայի, Թաիլանդի, Սլովակիայի Հանրապետության և Կամբոջայի կառավարությունների կողմից ՄԱԿ-ի Արձագանքման և վերականգնման հիմնադրամում ներդրումների շնորհիվ: ՄԱԿ-ի COVID-19-ի արձագանքման և վերականգնման բազմագործընկերային հավատարմագրային հիմնադրամի (UN COVID-19 MPTF) կողմից ֆինանսավորվող նախագիծը կնպաստի ՄԱԿ-ի COVID-19-ի Սոցիալ տնտեսական արձագանքման և վերականգնման ծրագրի (USUՎԾ/SERRP) շրջանակներում սահմանված առաջնահերթությունների իրականացմանը:

© 2021 ՄԱԿ Կանայք

Բոլոր իրավունքները պահպանված են:

Սույն հրապարակման մեջ ներկայացված են հեղինակի (հեղինակների) տեսակետները, որոնք պարտադիր չէ, որ արտահայտեն ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻԴՅՈ-ի, ՅՈՒՆԻՄԵՖ-ի և «ՄԱԿ-ի կանայք»-ի տեսակետները:

Հեղինակ(ներ)՝ Ամիրա Դիալո  
Խմբագիր(ներ)՝ Ֆարիա Մալման Ասիֆ, Նվարդ Մանասյան և Ջեֆրի Ստերն  
Թարգմանիչ(ներ)՝ Շուշանիկ Աղաբաբյան  
Դիզայներ(ներ)՝ Ասյա Ֆաթմա Բադլի

Նոյեմբեր, 2021թ.



This guide was developed as part of **United Nations MPTF Office**

Ուղեցույց «**Safe YOU**» բջջային  
հավելվածի շահագրգիռ կողմերի  
համար՝ ուղղված գենդերային  
բռնության հետ կապված թվային  
բովանդակության ստեղծմանը և  
կանանց ու դեռահաս աղջիկներին  
գենդերային բռնությունից  
պաշտպանելուն

# ՑԱՆԿ

05

---

## 1. Ներածություն

- 05 1.1 Համատեքստ
- 06 1.2 Նպատակներ և մեթոդաբանություն

07

---

## 2. Safe YOU-ի մասին

- 07 2.2 Կարծիքներ Safe YOU հավելվածի վերաբերյալ<sup>3</sup>
- 08 2.3 Քաղված դասեր և բարելավման ենթակա ոլորտներ

10

---

## 3. Առաջարկություններ

- 10 3.1 Improving digital content creation
- 12 3.2 Տեղեկատվական անվտանգության և էթիկական խնդիրներ
- 14 3.3. Մոբիլիզացնել ավելի շատ կանանց և դեռահաս աղջիկներ՝ որպես օգտատերեր

18

---

Հավելված I. Վերլուծական ուսումնասիրությունների փաստաթղթերի և հրապարակումների ցանկ

19

---

Հավելված II. Հարցաշար շահագրգիռ կողմերի համար

22

---

Հավելված III: Safe YOU բջջային հավելվածի բովանդակության մշակմամբ զբաղվող շահագրգիռ կողմեր

23

---

Հավելված IV. Ֆորումների համար թեմաների ցանց

29

---

Հավելված V. ՅՈՒՆԻՑԵՖ-ի խորհրդատուի կողմից մշակվելիք կիրառական կանխարգելման թեմաներ

30

---

Հավելված VI. Բովանդակության մշակման համար օժանդակ գործիքներ

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

<b>ՔՀԿ</b>	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
<b>ԳԲ</b>	Գենդերային բռնություն
<b>ԱՆԻ</b>	Ազդեցության նորարարությունների ինստիտուտ
<b>ԼԳՏԻՔ</b>	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգեյեր, քուիր և ինտերսեքս
<b>ՀԿ</b>	Հասարակական կազմակերպություն
<b>ՄԱԿ</b>	Միացյալ ազգերի կազմակերպություն
<b>ՄԱԶԾ</b>	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
<b>ՅՈՒՆԻՍԵՖ</b>	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ
<b>ՄԱԱԶԿ</b>	ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն
<b>ՄԱԲՀ</b>	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ
<b>ՄԱԿ Կանայք</b>	ՄԱԿ-ի՝ գենդերային հավասարության և կանանց զորեղացման կառույց
<b>ԿԱՆԲ</b>	Կանանց և աղջիկների նկատմամբ բռնություն

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## 1.1 Համատեքստ

Գենդերային բռնությունը (ԳԲ) համաշխարհային և հանրային խնդիր է և մարդու իրավունքների խախտում կանանց, աղջիկների, տղամարդկանց, տղաների և ստանդարտներին չհամապատասխանող անձանց (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, քվիր և ինտերսեքս (ԼԳԲՏՔԻ)): Կանայք և աղջիկները անհամաչափորեն են տուժում ԳԲ-ից: Ամբողջ աշխարհում յուրաքանչյուր երրորդ կինն իր կյանքի ընթացքում ենթարկվում է ֆիզիկական և/կամ սեռական բռնության, առավել հաճախ՝ զուգընկերոջ կողմից:<sup>1</sup>

Կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը (ԿՆԲ) Հայաստանում դեռևս իրականություն է. ընտանեկան բռնությունը երկրում բռնության ամենատարածված դրսևորումն է: Դրա հասցեագրումը հանգեցրեց նրան, որ 2017 թվականին ընդունվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը:

2016 թվականին ՄԱԲՀ-ի կողմից Հայաստանի բոլոր 10 մարզերում<sup>2</sup> «Երևանից և քաղաքային (22) և գյուղական (36) համայնքներից 18-59 տարեկան 1617 հարցվածների (767 տղամարդ և 850 կին) շրջանում իրականացված «Տղամարդիկ և գենդերային հավասարությունը Հայաստանում» հարցման իզական սեռի հարցվածների 46 տոկոսը հայտնել է, որ հոգեբանական բռնության է ենթարկվել տղամարդ զուգընկերոջ կողմից, 21 տոկոսը՝ տնտեսական բռնության իսկ 13 տոկոսը՝ ֆիզիկական բռնության<sup>3</sup>

Տղամարդ հարցվածների գրեթե 20 տոկոսը հայտնել է, որ արգելել է զուգընկերուհուն աշխատանք գտնել, գնալ աշխատանքի, առևտուր անել կամ գումար աշխատել: Տղամարդ հարցվածների 8 տոկոսը

հայտնել է, որ ստիպել է կնոջը կամ աղջկան սեռական հարաբերություն ունենալ իրենց հետ, իսկ բոլոր հարցվածների 5 տոկոսը հայտնել է, որ ստիպել է սեփական կնոջը սեռական հարաբերություն ունենալ իրենց հետ (ամուսնական բռնաբարություն):<sup>4</sup>

Սեռական բռնությունը մի խնդիր է, որի մասին հիմնականում թերի է գեկուցվում՝ վիկտիմիզացիայի հետ մեկտեղ խարանման մտավախությունների պատճառով: Ըստ 2015-2016 թթ. Հայաստանի ժողովրդագրական և առողջապահական հետազոտության՝ ֆիզիկական և սեռական բռնության ենթարկված կանանց 40 տոկոսը երբեք չի հրապարակել բռնության փաստը:<sup>5</sup> Սոցիալական նորմերի և գենդերային հավասարության վրա ազդող բացասական ընկալումների պատճառով Հայաստանում շատ կանայք նախընտրում են լռել: Այս խարանումը մեղքի շղթա է առաջացնում կանանց և դեռահաս աղջիկների շուրջ, այլ ոչ թե հանցագործի և նրա արատավոր արարքի պարսավանքի զգացում: Թերի հաղորդումները խոչընդոտում են խնդրին պատշաճ լուծում գտնելու, փրկվածներին աջակցելու և հանցագործներին պատասխանատվության ենթարկելու ջանքերը:

Սահմանափակումները, արգելափակումները և COVID-19 համավարակին արձագանքման այլ միջոցները մեծացրել են մարդկանց, ծառայություններ մատուցողների և կազմակերպությունների արդեն աճող առցանց ներկայությունը և նրանց փոխազդեցությունը թվային ծառայություններին ու վստահությունը դրանց նկատմամբ: Կանանց նկատմամբ բռնությունը դադարեցնելու կոալիցիան, որը կազմված է բռնության գոհերին բազմալարտ աջակցություն տրամադրող կազմակերպություններից, հաղորդել է ԿՆԲ-ի աճի մասին հատկապես 2020 թվականի ապրիլին (30 տոկոս) և մայիսին (50 տոկոս)՝ արգելափակումների

1 [https://www.who.int/health-topics/violence-against-women#tab=tab\\_1](https://www.who.int/health-topics/violence-against-women#tab=tab_1)

2 UNFPA (2016) Men and gender equality in Armenia - Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների հետազոտության զեկույց, էջ

3 UNFPA (2016) Men and gender equality in Armenia - հետազոտության արդյունքների հետազոտության զեկույց, էջ 58-59.

4 UNFPA (2016) Men and gender equality in Armenia - հետազոտության արդյունքների հետազոտության զեկույց, էջ.79.

5 Հայաստանի ժողովրդագրական և առողջապահության հետազոտություն 2015-2016

6 Խախտություն ձևավորողների համաշխարհային ցանց. 2021. Հայաստանի երկրի պրոֆիլ, p.2.

7 Human Rights, Watch համաշխարհային զեկույց, 2021, <https://www.hrw.org/world-report/2021/country-chapters/armenia>

8 [Ազդեցության նորարարության ինստիտուտ \(ԱՆԻ\)](#)

9 [Safe YOU Virtual Safe Space for Women.](#)

գազաթնակետի ժամանակահատվածում: Այս իրավիճակը տագնապ առաջացրեց՝ կապված առհասարակ ԳԲ-ի և հատկապես գոհերի կարիքներին արձագանքելու անբավարար կարողությունների հետ:<sup>6</sup> 2021 թվականի «Human Rights Watch»-ի համաշխարհային գեկույցում 2020 թվականին Հայաստանի իշխանությունները ընտանեկան բռնության մեղադրանք են ներկայացրել 196 մարդու և 62 գործ ուղարկել դատարան:<sup>7</sup>

Օգտագործելով բազմաֆունկցիոնալ բջջային հավելվածներ՝ կանանց և աղջիկներին ԳԲ-ից պաշտպանելու համար, 2020 թվականին Ազդեցության նորարարության ինստիտուտը (Impact Innovations Institute, ԱԻԻ)՝ կանանց կողմից ղեկավարվող սոցիալական նորաստեղծ

ընկերություն, <sup>8</sup> որը նորարարությունների և տեխնոլոգիաների միջոցով կենտրոնանում է սոցիալական խնդիրների լուծման վրա, մշակել և գործարկել է «Safe YOU» բջջային հավելվածը: <sup>9</sup> Հավելվածը նպատակ ունի ապահովել կանանց և դեռահաս աղջիկների իրազեկությունը գենդերային բռնության և սեռական և վերարտադրողական առողջության վերաբերյալ և դուրսացնել աջակցության ծառայությունների հասանելիությունը բռնության ենթարկվածների համար: «Safe YOU»-ի աջակիցներից են Համաշխարհային բանկի խումբը, Եվրոպական միությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Հայաստանում Նիդեռլանդների դեսպանությունը, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը (UNFPA) և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (UNICEF):

## 1.2 Նպատակներ և մեթոդաբանություն

Մույն ուղեցույցը «Safe YOU» բջջային հավելվածի մշակողներին և գործընկերներին տրամադրում է գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են գենդերային բռնությանը առնչվող թվային բովանդակություն ստեղծելու և կատարելագործելու համար, ներառյալ օժանդակ գործիքները, հավելվածների օգտատերերի կիբերանվտանգությունը և կանանց և դեռահաս աղջիկների մոբիլիզացումը հավելվածից օգտվելու նպատակով:

Ուղեցույցը կիզոթացնի «Safe YOU»-ն և նրա տեխնոլոգիական ներուժը՝ ուղղված գենդերային բռնության դեմ պայքարին՝ անդրադառնալով բովանդակության ստեղծման մարտահրավերներին: Այն ուղեցույց է հանդիսանում մասնակից գործընկերների և տեխնիկական և բովանդակություն մշակողների համար, թե ինչպես կարելի է ստեղծել ներառական թվային միջավայր՝ կապված ԳԲ կանխարգելման, արձագանքման և պաշտպանության հետ, և ինչպես կարող են ստեղծել անվտանգ առցանց տարածքներ կանանց և աղջիկների համար (ներառյալ COVID-19-ի համավարակի համատեքստում և ապագայում հնարավոր ճգնաժամային իրավիճակներում):

Այս ուղեցույցի մշակման համար օգտագործվել է խառը և մասնակցային մեթոդաբանություն համատեղելով վերլուծական ուսումնասիրությունը, ԱԻԻ -ի և ՅՈՒՆԻՍԵՖ-համակարգողների ներդրումները և կազմակերպություններին միտված առցանց հարցումը:

Վերլուծական ուսումնասիրությունը ներառում էր բազմաթիվ փաստաթղթեր և հրապարակումներ՝ կապված բջջային հավելվածների (ներառյալ «Safe YOU»-ի), գենդերային բռնության, սեռական և

վերարտադրողական առողջության, COVID-19-ի և կիբերբռնության հետ (տես Հավելված I):

Առցանց հարցման շրջանակում տեղեկատվություն է հավաքվել 53 կազմակերպություններից՝ կանանց և աղջիկների հանդեպ բռնության մի քանի թվային դրսևրումների վերաբերյալ, ներառյալ ընդհանուր և առցանց գենդերային ոտնձգության, սեռական շահագործման, ատելության խոսքի, անհոժարակամ ստեղծված պոռնոգրաֆիայի, մանկական պոռնոգրաֆիայի և կիբերհետապնդման մասին (տես Հավելված II-ը՝ առցանց հարցման ձևանմուշ):

Հարցման ենթարկված կազմակերպությունների թվում էին Կանանց նկատմամբ բռնության դադարեցման կոալիցիայի անդամները, Ընտանեկան բռնության խորհրդի և ԳԲ աշխատանքային խմբի անդամները, ինչպես նաև գենդերային բռնության դեմ գործունեություն իրականացնող կառավարության, ազգային և միջազգային հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ները) և ՄԱԿ-ի գործակալությունների ներկայացուցիչները: 53 կազմակերպություններից 72 տոկոսը հանդիսացել են Safe YOU-ի անմիջական գործընկերները, իսկ հարցվածների 94 տոկոսը եղել են իգական սեռի ներկայացուցիչներ:

Համավարակի հետ կապված ճամփորդությունների և ժամանակի սահմանափակումները խանգարեցին կանանց և դեռահաս աղջիկների հետ նախատեսված Safe YOU-ի բովանդակության և գործառնությունների վերաբերյալ ֆոկուս խմբային քննարկմանը: Այս սահմանափակմանը անդրադառնալու համար ուղեցույցը խորհուրդներ է պարունակում Safe YOU օգտատերերից արձագանքներ ստանալու համար:

# 2. « SAFE YOU »-ի ՄԱՍԻՆ

«Safe YOU»-ն 2018 թվականին կանանց և դեռահաս աղջիկների անվտանգության համար ստեղծված, տեխնոլոգիաների հիմքով նորարարություն է, որի նպատակն է կանխարգելել գենդերային բռնությունը և արձագանքել դրան: Այն համատեղելի է iOS և Android համակարգերի հետ:

Սեղմելով «Օգնություն» (Help) կոճակը՝ «Safe YOU»-ի օգտատերերը կարող են նախապես ընտրված հասցեատերերին, այդ թվում՝ անձնական կոնտակտներին, աջակցության ծառայություններին և ոստիկանությանը միաժամանակ տագնապի հաղորդագրություններ ուղարկել համապատասխան տեղեկություններով (ներառյալ աշխարհագրական տեղորոշումը): Օգտատերերը կարող են ընտրել մինչև երեք ՀԿ, պետական կազմակերպություն կամ մասնագետ «Safe YOU»-ի ստուգված գործընկերների ցանկից՝ անհրաժեշտության դեպքում «մեկ կոճակի սեղմումով» աջակցություն ստանալու համար:

Ծառայություն մատուցողները կարող են նաև ծանուցումներ ստանալ կառավարման վահանակի միջոցով: Աջակցման ծառայությունները ներառում են բռնաբարության դեպքում կլինիկական օգնություն, ֆասավաճքների բուժում, խորհրդատվություն և աջակցություն հոգեբանական վերականգնման և տրավմայից ապաքինման համար, ինչպես նաև դատական աջակցություն քրեական հետապնդման համար:

## ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՕԳՏԱՏԻՐՈՋ և SAFE YOU-ի ԱԶԱԿՑՈՂ ՀՈԳԵԲԱՆԻ ՄԻՋԱ (ԱՂԲՅՈՒՐԸ՝ SAFE YOU ԲԶՁԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ)

Հավելվածը նաև առաջարկում է ֆորումներ՝ անանուն խոսելու կարևոր և կարևոր թեմաների շուրջ՝ կապված գենդերային բռնության և կանանց և աղջիկների նկատմամբ բռնության հետ: «Safe YOU»-ն ապահովում է անվճար մասնագիտական խորհրդատվություն ստուգված մասնագետների կողմից, ինչպիսիք են բժիշկները, իրավաբանները, հոգեբանները, ինչպես նաև հարթակ է տրամադրում հասարակական կազմակերպությունների, պետական կազմակերպությունների և մասնագետների հետ կապ հաստատելու համար: Պարզ սեղմումով օգտատերերը կարող են տեսագրել գենդերային բռնության դեպքերը՝ այն որպես ապացույց պահպանելու համար:

**Օգտատեր.**  
Բարի օր: Ես անունայլուծված եմ: Նախկին ամուսինս շարունակում է հոգեբանական ճնշում գործադրել ինձ վրա՝ սպառնալով, որ երեխաներիս կլվի: Նա պարտադրում է է իր ցանկությունները երեխաների հետ կապված բոլոր կարևոր որոշումների առնչությամբ: Ուզում եմ իմանալ, թե որո՞նք են այն դեպքերը, երբ օրենքը նրան իրավունք կտա խլել երեխաներիս, և ինչպես կարող եմ հաղթահարել վախս և հեռացնել նրան իմ կյանքից: Շտրիակալություն:

**Հոգեբան.**  
Հ ա Ր Գ Ե Լ Ի օգտատեր, կարծում եմ, որ ձեր դեպքում առաջնայինը իրավախորհրդատուներին դիմելն է: Երբ դուք ճշգրիտ տեղեկատվություն ստանաք իրավական դրույթների և ձեզ և ձեր երեխաներին տրված իրավունքների վերաբերյալ, հարավոր է զգաք, որ հաղթահարել եք ձեր վախերը: Ցանց բաժնից կարող եք ընտրել ցանկացած կազմակերպություն, որն ապահովում է իրավաբանական խորհրդատվություն և կարող եք գրել նրանց:




2021 թվականի հուլիսի դրությամբ Safe YOU-ն ուներ ավելի քան 800 ակտիվ օգտատեր, Հայաստանում և ավելի քան 15000 ակտիվ օգտատեր՝ Վրաստանում:<sup>10</sup>

Տեղեկատվության տարածումը և փորձի փոխանակումը հայկական և վրացական Safe YOU թիմերի միջև քաղված դասերի, լավագույն փորձի և մարտահրավերների (ինչպես նաև դրանք հաղթահարելու համար օգտագործվող ռազմավարությունների վերաբերյալ) կարող են օգտակար լինել մշակողների և գործընկերների համար: Նրանք կարող են կա՛մ կրկնել, կա՛մ հարմարեցնել Վրաստանում Safe YOU-ի հաջողությունները՝ Հայաստանում օգտատերերի ներգրավվածությունը ավելացնելու համար:

ԱՆԻ-ն «Safe YOU»-ի համակարգերն ամբողջությամբ ուստիկանության հետ ինտեգրելու նպատակով համագործակցում է Հայաստանում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ: Հավելվածի ապագա թարմացման դեպքում մոտակա ուստիկանության պարեկային ծառայության աշխատակիցները կկարողանան ստանալ և անմիջապես արձագանքել ահազանգերին:

## 2.1 ԿԱՐԾԻՔՆԵՐ «SAFE YOU» ՀԱՎԵԼՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այս ուղեցույցի մշակմանը աջակցելու համար հարցված 53 կազմակերպություններից.



Մնացած հարցվողները կա՛մ տեղյակ չէին Safe YOU բջջային հավելվածի մասին, կա՛մ կարծում էին, որ բովանդակությունը բավականաչափ մշակված չէ, զուրկ է տեղեկատվությունից կամ չափազանց տեխնիկական է:

## 2.2 ԲՋՋԱՅԻՆ ԴԱՍԵՐ և ԲԱՐԵԼՎԱԾՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈԼՈՐՏՆԵՐ

**Բջջային հավելվածների մոտեցումը պետք է ինտեգրվի կանխարգելման և արձագանքման ավելի լայն համատեքստում՝ կապելով հավելվածները գոյություն ունեցող հաստատությունների հետ:**

Բավարար չէ, որ հավելվածները նպատակ ունենան անդրադառնալ ԿԱՆԲ-ի ավելի լայն սոցիալական և ինստիտուցիոնալ համատեքստին՝ առանց իրենց մոտեցումը ինտեգրելու կանխարգելման և արձագանքման ավելի լայն համատեքստում: Հավելվածները պետք է կապեր հաստատեն գոյություն ունեցող հաստատությունների (օրինակ՝ ինքնօգնության խմբերի, ՀԿ-ների և կանանց կազմակերպությունների) հետ և հաշվի առնեն ԿԱՆԲ-ին նպաստող սոցիալական նորմերը և թույլ հաստատությունները (ներառյալ սոցիալական ծառայությունների, ուստիկանության, իրավաբանական և առողջապահական ոլորտներում ԿԱՆԲ-ի վերաբերյալ նպատակային ուսուցման բացակայությունը) և կրթության ոլորտում գենդերային հավասարության խթանման բացակայությունը:<sup>11</sup>

«Safe YOU»-ի ծրագրավորողները աշխատում են այս ուղղությամբ՝ փորձելով ուժեղացնել հավելվածի ֆունկցիոնալությունը՝ ներգրավելով ավելի շատ շահագրգիռ կողմերի ֆինանսական և տեխնիկական աջակցություն տրամադրելու և բովանդակության զարգացմանը և ծառայությունների մատուցմանը նպաստելու համար:


**Ժամանակ է պահանջվում, որպեսզի գործընկերների շրջանում նոր տեխնոլոգիաների հանդեպ վստահություն և հավատ ձևավորվի**

STAT-ի (Հոնկոնգում գործող, գլոբալ զարգացման և անվտանգության հարցերի շուրջ աշխատող մասնագետների ցանց) զեկույցից քաղված դասն այն է, որ «Ժամանակ է պահանջվում այլ կարևոր գործընկերների միջև նոր տեխնոլոգիաների նկատմամբ վստահություն և հավատ ձևավորելու համար»<sup>12</sup>: Հաշվի առնելով այս դասը՝ բջջային հավելվածների մշակողները պետք է գործընկերային հարաբերություններ հաստատեն և արդյունավետորեն համագործակցեն ծառայություններ մատուցողների հետ՝ ամրապնդելու Safe YOU-ն որպես իր օգտատերերի (կանանց և դեռահաս աղջիկների) հանդիպման վայր:

10 Ազդեցության նորարարության ինստիտուտ, օգոստոս 2021թ.


11 Eisenhut K, Sauerborn E, García-Moreno C, et al. 2020. Բջջային հավելվածներ՝ ուղղված կանանց նկատմամբ բռնության հասցեագրմանը. համակարգված վերանայում. BMJ Global Health. Այս գեկույցը համակարգված առցանց որոնման է վերաբերում, որը համապատասխանում է համակարգված վերանայումների և մետա-վերլուծությունների ուղեցույցների նախընտրելի հաշվետվության կետերին՝ բացահայտելու Համաշխարհային բանկի հինգ տարածաշրջաններում (Եվրոպա և Կենտրոնական Ասիա; Հյուսիսային Ամերիկա, Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան; Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա, Հարավային Ասիա և Ենթասահարյան Աֆրիկա): Կանանց նկատմամբ բռնությանը վերաբերող հավելվածները: Այս հետազոտության մեջ ներառվել է 171 հավելված՝ ուղղված կանանց նկատմամբ բռնությանը:

12 SATT. 2014. Գենդերային բռնության հաղթահարում տեխնոլոգիաների միջոցով. Բջջային և ինտերնետ տեխնոլոգիաների միջամտությունների դեպքերի ուսումնասիրություն զարգացող համատեքստերում:

 Կարևոր է պահպանել էթիկական և անվտանգության չափանիշները տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ժամանակ՝ գենդերային բռնությունը կանխելու և դրան արձագանքելու ժամանակ:

STATT-ի հետազոտությունն ընդգծում է գենդերային բռնության դեմ պայքարի համար տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման հետևանքով առաջացած հնարավոր էթիկական և անվտանգության ռիսկերը: Ռիսկերը ներառում են «սպառնալիքներ առցանց և բջջային կապի գաղտնապահության, գաղտնիության և անվտանգության համար, այս տեխնոլոգիաների կիրառմամբ ծառայությունների մատուցման հատակ չափանիշների բացակայություն, կազմակերպության ռիսկերը և խոտանները հենց տեխնոլոգիայի վրա հարձակումների պատճառով և օգտատերերի նկատմամբ ոտնձգություններնու չարաշահումները»:<sup>13</sup>

Safe YOU-ն բարելավվում է՝ ա) դարձնելով այն օգտատերերի վրա ավելի կենտրոնացած և ապահովելով, որ բովանդակությունը և դիզայնը համապատասխան են տարիքին և հարմարեցված են հաշմանդամներին. (բ) գրանցված ծառայություններ մատուցողներին հավելվածների օգտագործման և ներգրավվածության մակարդակների իրական ժամանակի վերլուծության տրամադրում՝ նրանց բովանդակության տրամադրման և արձագանքման բարելավման նպատակով. և (գ) վերանայելով տվյալների ձեռքբերման, օգտագործման, պահպանման և փոխանակման նրանց պայմանները: Safe YOU-ն ջանքեր է գործադրել՝ դառնալու գրանցված գլոբալ հանրային թվային ապրանք դարձնելով իր բոլոր մշակումները բաց, իսկ ծածկագրերը բաց հասանելի դարձնելով հանրային պահուստի միջոցով:

 Հաշվի չառնվելու դեպքում, զուգընկերների կողմից բջջային սարքերի վերահսկումը կամ ստուգումը ինտիմ զուգընկերոջ կողմից բռնության դեպքում կարող է ավելի մեծ ռիսկեր պարունակել գենդերային բռնության դեմ պայքարելու համար բջջային հավելված օգտագործող կանանց և դեռահաս աղջիկների համար:


Զուգընկերոջ կողմից հսկողությունը տարբեր կերպ է ազդում կանանց վրա՝ հաճախ հանդիսանալով զուգընկերոջ կողմից բռնության աղբյուր և հետևանք: Որոշ բռնարարներ օգտագործում են թվային տեխնոլոգիաները՝ իրենց գոհերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար, ներառյալ տեղադրելով լրտեսող ծրագրեր և հետապնդող հավելվածներ իրենց գոհի հեռախոսում, որպեսզի գաղտնի վերահսկեն ամեն ինչ:

Ըստ Էլեկտրական և Էլեկտրոնային ինժեներների ինստիտուտի, զուգընկերոջ կողմից բռնություն «վերապրածները, նրանց աջակցող մասնագետները և լրատվամիջոցները հայտնում են, որ լրտեսող ծրագրերը աճող սպառնալիք են վերապրածների անվտանգության և ապահովության համար: Ամենաձայրահեղ դեպքերում զուգընկերոջ հսկողությունը կարող է հանգեցնել ֆիզիկական կռվի, բռնության և նույնիսկ սպանության»:<sup>14</sup>

13 Ibid 11. էջ.31.

14 R. Chatterjee et al. “Զուգընկերոջ կողմից բռնության դեպքում օգտագործվող լրտես/հետևող ծրագրեր.” 2018 IEEE անվտանգության և գաղտնիության սիմպոզիում, 2018, էջ. 441-458. <https://ieeexplore.ieee.org/document/8418618>

# 3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 3.1 ԹՎԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Թվային բովանդակության բարելավումը ենթադրում է քննարկվելիք թեմաների և գործունեության տեսակների բազմազանեցում և որոշ սկզբունքների ու մոտեցումների դիտարկում:

Safe YOU-ի մեկնարկից ի վեր գենդերային բռնության հետ հետ կապված տարբեր թեմաներ են ընդգրկվել: Որպես ՄԱԿ-ի համատեղ ծրագրի մի մաս, ՅՈՒՆԻՍԵՖ-ը Կանանց նկատմամբ բռնությունը դադարեցնելու կոալիցիայի հետ մշակեց մի նախագիծ «Ստեղծելով դիմակայունություն COVID 19-ից անդին. վիրտուալ անվտանգ տարածքից մինչև դեպքերի կառավարման վերաբերյալ միջգերատեսչական համագործակցություն՝ հանուն ԳԲ կանխարգելման, արձագանքման և ծառայությունների մատուցման բարելավված հասանելիության»: Առաջին արդյունքը նախատեսված է վիրտուալ անվտանգ տարածքի տարիքին հարմարեցված բովանդակության մշակման և հրապարակման համար ակտիվ ֆորումներով, որոնք հասանելի են կանանց և դեռահաս աղջիկների համար բջջային հավելվածի, մասնավորապես «Safe YOU»-ի միջոցով: Այս նախաձեռնության շրջանակներում կոալիցիայի անդամները մշակել են «թեմաների ցանց», որը պարունակում է 139 թեմա կապված գենդերային բռնության, սեռական և վերարտադրողական առողջության, զբաղվածության և աշխատավայրում պաշտպանության հետ (տես Հավելված IV):

ՅՈՒՆԻՍԵՖ-ը նաև ներգրավել է խորհրդատու՝ վիրտուալ անվտանգ տարածքում (Safe YOU) հրապարակման համար առնվազն 17 հոդված մշակելու նպատակով: Նպատակն է մշակել կանանց և դեռահաս աղջիկներին ուղղված բովանդակություն՝ բարձրացնելու իրազեկվածությունը կիրառելիության մասին՝ նպատակ ունենալով այն կանխել և պաշտպանել դրանից (տես Հավելված V):

Ավելի լայն բազմազանություն ապահովելու համար այս ուղեցույցում առաջարկվում են լրացուցիչ թեմաներ՝ նյութերի բազմազանությունը մեծացնելու համար: Այս թեմաները հաշվի են առնում խոցելի իրավիճակներում հայտնված կանանց և աղջիկների հատուկ կարիքները, ինչպիսիք են հաշմանդանություն ունեցողները կամ ԼԳԲՏՔԻ համայնքի ներկայացուցիչները:

Թեմաների ցանցը, ՅՈՒՆԻՍԵՖ-ի խորհրդատուի հոդվածները և այս ուղեցույցի բովանդակային նկատառումները փոխընդանուր են միմյանց և «Safe YOU»-ի գոյություն ունեցող թեմաներին:

Հատկապես դեռահաս աղջիկների հետ կապված թեմաները կարող են հետաքրքրել կանանց և հակառակը: Օրինակ, թեև «Սեռահասունություն և մարմնի փոփոխություններ» թեման ուղղված է դեռահասներին, մայրերը կարող են ցանկանալ ավելի իմանալ նման փոփոխությունները՝ թեման կապից հեռանալու փոխարեն: «Կանայք և ձեռներեցությունը. հնարավորություններ» թեմաները կարող են ոգեշնչել դեռահաս աղջիկներին՝ հետապնդելու կարիերայի նպատակներ:

# SAFE YOU-Ի ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

Թեմաներ		Հիմնական ուղերձեր և բովանդակություն
<b>I. ԳԲ և հարակից ծառայությունների հիմունքները</b>		
1. ԳԲ մասին իմանալու հիմնական բաները	<ul style="list-style-type: none"> <li>• ԳԲ սահմանումը ի հակադրումը ԿԱՆԲ-ին</li> <li>• ԳԲ դրդապատճառները/ պատճառները, հետևանքները և տուժող անձինք (կանայք, աղջիկները, տղամարդիկ, տղաները, ոչ բինար գենդերի անձինք)</li> <li>• Սոցիալական նորմերի փոփոխությունը կարող է վերջ տալ ԳԲ-ին</li> </ul>	
2. ԿԱՆԲ՝ մարդու իրավունքների խախտում	<ul style="list-style-type: none"> <li>• ԿԱՆԲ-ի սահմանումը և վիճակագրությունը Հայաստանում</li> <li>• ԿԱՆԲ-ի ազդեցությունը կրող մարդու հիմնական իրավունքները</li> <li>• Սոցիալական նորմերի փոփոխությունը կարող է վերջ տալ ԿԱՆԲ-ին</li> </ul>	
3. Արտակարգ իրավիճակում օգնություն. մոտակա ոստիկանական բաժանմունք, հիվանդանոց, հոգեբուժական ծառայության տեղորոշիչներ	<ul style="list-style-type: none"> <li>• Գոյություն ունեցող աջակցության տեսակները</li> <li>• Որտեղ ստանալ շտապ օգնություն</li> <li>• Բռնության իրավիճակից առաջ մոտակա աջակցության ծառայությունների նույնականացում</li> </ul>	
4. ԳԲ աջակցության ծառայությունների հասանելիություն՝ COVID-19-ի և արտակարգ իրավիճակների համատեքստում	<ul style="list-style-type: none"> <li>• COVID-19-ի և այլ արտակարգ իրավիճակների ազդեցությունը կանանց և աղջիկների իրավիճակի վրա ԳԲ առումով</li> <li>• Այս իրավիճակներում հասանելի աջակցության ծառայություններ և հատուկ միջոցներ</li> </ul>	
5. ԳԲ վերապրածներին բժշկական աջակցություն	<ul style="list-style-type: none"> <li>• Բժշկական աջակցության սահմանում ԳԲ-ից տուժածների համար</li> <li>• Այս աջակցությունը ապահովող կառույցներ (և որտեղից ստանալ այս աջակցությունը)</li> </ul>	
6. ԳԲ վերապրածներին սոցիալ-հոգեբանական աջակցություն	<ul style="list-style-type: none"> <li>• Սոցիալ-հոգեբանական աջակցության սահմանում ԳԲ զոհերի համար</li> <li>• Այս աջակցությունը ապահովող կառույցներ (և որտեղից ստանալ այս աջակցությունը, ֆիզիկապես կամ առցանց)</li> </ul>	
7. ԳԲ վերապրածներին տնտեսական աջակցություն	<ul style="list-style-type: none"> <li>• Տնտեսական աջակցության սահմանում ԳԲ զոհերի համար</li> <li>• Այս աջակցությունը ապահովող կառույցներ (և որտեղից ստանալ այս աջակցությունը, ֆիզիկապես կամ առցանց)</li> </ul>	
8. ԳԲ վերապրածներին իրավաբանական աջակցություն	<ul style="list-style-type: none"> <li>• Իրավաբանական աջակցության սահմանում ԳԲ զոհերի համար</li> <li>• Այս աջակցությունը ապահովող կառույցներ (և որտեղից ստանալ այս աջակցությունը, ֆիզիկապես կամ առցանց)</li> </ul>	
9. 72 ժամ. խորհուրդներ այն մասին, թե ինչ անել և չանել բռնաբարությունից հետո	<ul style="list-style-type: none"> <li>• 72 ժամվա ընթացքում աջակցության դիմելու կարևորությունը,</li> <li>• Վայրեր (ֆիզիկական և առցանց), որտեղ կարելի է աջակցություն ստանալ,</li> <li>• Խորհուրդներ, թե ինչ անել և չանել բռնաբարությունից հետո</li> </ul>	
10. Պաշտպանություն ԳԲ-ից. ապաստաններ և ապահով վայրեր	<ul style="list-style-type: none"> <li>• Բռնության ենթարկվածների համար ապաստարանների և այլ անվտանգ տարածքների բացատրություն</li> <li>• Կանանց և աղջիկների պաշտպանության համար ապաստարանների/անվտանգ տարածքների առկայություն</li> </ul>	
<b>II. Սեռական բռնություն</b>		
11. Ինչ պետք է իմանալ երեխաների սեռական շահագործման և բռնության մասին	<ul style="list-style-type: none"> <li>• Երեխայի սեռական շահագործման և բռնության սահմանում</li> <li>• Երեխաների սեռական շահագործման և բռնության հետևանքները</li> <li>• Կանխարգելման և արձագանքման միջոցառումներ</li> </ul>	
12. Ինչ պետք է իմանան ծնողները երեխաների սեռական բռնության վաղ նշանների մասին	<ul style="list-style-type: none"> <li>• Ի՞նչ է երեխայի նկատմամբ սեռական բռնությունը</li> <li>• Երեխաների սեռական բռնության հետևանքները</li> <li>• Երեխաների մոտ սեռական բռնության նշաններ</li> <li>• Խորհուրդ, թե ինչ անել այս նշանների հայտնաբերման դեպքում</li> </ul>	

<p><b>13. Խորհուրդներ մայրերին՝ ինչպես խոսել երեխաների հետ մարմնի անձեռնմխելիության մասին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Երեխաների, մասնավորապես՝ աղջիկների մարմնի անձեռնմխելիության սահմանում (լավ հպում/ վատ հպում)</li> <li>• Որոշ գաղափարներ երեխաների, հատկապես դեռահաս աղջիկների հետ խոսելու մարմնի անձեռնմխելիության մասին</li> </ul>
<p><b>14. Myths and facts about sexual assault</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Առասպելներ և փաստեր սեռական ոտնձգությունների մասին</li> </ul>
<p><b>15. Սեռական բռնության հետևանքները</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Սեռական բռնության սահմանում</li> <li>• Որոշ վիճակագրություն և հարակից իրավական դաշտեր Հայաստանում</li> <li>• Սեռական բռնության հետևանքների ցանկը գոհերի (հուզական, հոգեբանական, ֆիզիկական, սոցիալ-տնտեսական), բռնարարի և համայնքի համար</li> </ul>
<p><b>16. Սեռական բռնության ազդեցությունը վերարտադրողական առողջության վրա</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Սեռական բռնության և վերարտադրողական առողջության սահմանում</li> <li>• Վերարտադրողական առողջության վրա սեռական բռնության հետևանքների ցանկը</li> <li>• Այս հետևանքները կանխելու կամ մեղմելու միջոցառումներ</li> </ul>
<p><b>17. Ժամադրության ժամանակ բռնաբարության ռիսկերը նվազագույնի հասցնելու խորհուրդներ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ժամադրության բռնության սահմանումներ (մասնավորապես՝ ժամադրության ժամանակ բռնաբարության)</li> <li>• Որոշ գաղափարներ այն մասին, թե ինչ անել և ինչպես նվազագույնի հասցնել ժամադրության ժամանակ բռնության ռիսկերը, ներառյալ ժամադրության բռնաբարությունը</li> <li>• Գործնական լուծումներ և աջակցություն ժամադրության ժամանակ բռնաբարության տեղի ունենալու դեպքում</li> </ul>
<p><b>118. Պարտադրված մարմնավաճառություն և կանանց և աղջիկների թրաֆիքինգ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Պարտադրված մարմնավաճառության և թրաֆիքինգի սահմանումը</li> <li>• Կանանց և աղջիկների խոցելիությունը պարտադրված մարմնավաճառության և թրաֆիքինգի նկատմամբ</li> <li>• Պարտադրված մարմնավաճառության և թրաֆիքինգի վերաբերյալ ՀՀ օրենսդրության դրույթը</li> </ul>
<p><b>19. Խմբակային բռնաբարություն</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Խմբակային բռնաբարության սահմանումը և վիճակագրությունը Հայաստանում</li> <li>• Ռիսկի մեղմման խորհուրդներ և ինչպես/որտեղ դիմել աջակցության</li> </ul>

**III. Ընտանեկան բռնություն/զուգընկերոջ կողմից բռնություն**

<p><b>20. Զուգընկերոջ կողմից բռնությունը հասկանալը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Զուգընկերոջ կողմից բռնության սահմանումը, պատճառները, ձևերը և հետևանքները</li> <li>• Հարակից իրավական դրույթներ</li> <li>• Աջակցման ծառայությունների տեսակներն ու հասանելիությունը</li> </ul>
<p><b>21. Հարաբերություններում բռնի վարքի վաղ նշանները</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Որոշ վարքագծեր, որոնցից պետք է զգույշ լինել՝ բռնության իրավիճակներից խուսափելու համար, որոնք վատթարանում են կամ երկար տևում:</li> <li>• Որոշ գաղափարներ, թե ինչ անել աբուզիվ վարքագծի դեպքում</li> </ul>
<p><b>22. Ամուսնական բռնաբարություն</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ամուսնական բռնաբարության սահմանում, հետևանքներ և սխալ պատկերացումներ</li> <li>• Համապատասխան իրավական շրջանակներ</li> <li>• Հասանելի աջակցության ծառայություններ</li> </ul>
<p><b>23. Տնտեսական բռնություն</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Տնտեսական բռնության սահմանում և հետևանքներ</li> <li>• Համապատասխան իրավական շրջանակներ</li> <li>• Հասանելի աջակցության ծառայություններ</li> </ul>
<p><b>24. Հուզական բռնություն</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Հուզական բռնության սահմանում և հետևանքներ</li> <li>• Համապատասխան իրավական շրջանակներ</li> <li>• Հասանելի աջակցության ծառայություններ</li> </ul>
<p><b>25. Ֆիզիկական բռնություն</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ֆիզիկական բռնության սահմանում և հետևանքներ</li> <li>• Համապատասխան իրավական շրջանակներ</li> <li>• Հասանելի աջակցության ծառայություններ</li> </ul>
<p><b>26. Ընտանեկան բռնության ազդեցությունը երեխայի վրա</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ընտանեկան բռնության սահմանում</li> <li>• Ընտանեկան բռնության հետևանքները երեխաների վրա</li> <li>• Որոշ գաղափարներ, թե ինչպես պաշտպանել երեխաներին ընտանեկան բռնությունից և հասանելի աջակցության ծառայությունները</li> </ul>

<p><b>27. Չուզընկերոջ կողմից բռնություն երիտասարդների շրջանում</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Երիտասարդների համատեքստում գուզընկերոջ կողմից բռնության սահմանում</li> <li>• Երիտասարդների, հատկապես դեռահաս աղջիկների համար գուզընկերոջ կողմից բռնության հետևանքները</li> <li>• Հասանելի աջակցության ծառայություններ երիտասարդների, մասնավորապես՝ աղջիկների համար</li> </ul>
--	--

### IV. Վնասակար գործելակերպեր

<p><b>28. Երեխաների ամուսնություն</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Երեխաների ամուսնության սահմանումը, պատճառները և հետևանքները</li> <li>• Երեխաների ամուսնության մասին Հայաստանի օրենքները</li> <li>• Հասանելի աջակցության ծառայությունները</li> </ul>
<p><b>29. Հարկադիր ամուսնություն</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Հարկադիր ամուսնության սահմանումը, պատճառները և հետևանքները</li> <li>• Տարբերությունը հարկադիր և երեխաների ամուսնությունների միջև</li> <li>• Հարկադիր ամուսնության մասին Հայաստանի օրենքները</li> <li>• Հասանելի աջակցության ծառայությունները</li> </ul>
<p><b>30. Ձեր իրավունքները, երբ ձեզ ցանկանում են ամուսնացնել մանկահասակ տարիքում կամ հարկադրաբար</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ոչ ասելու իրավունք</li> <li>• Պաշտպանության և հասանելի օժանդակ ծառայությունների իրավունք</li> </ul>

### V. Գենդերային խտրականությունը և սեռական ոտնձգությունները աշխատավայրում և դպրոցում

<p><b>31. Գենդերային խտրականություն աշխատավայրում</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Աշխատավայրում գենդերային խտրականության սահմանումը և դրսևորումները</li> <li>• Առկա պաշտպանական միջոցներ</li> </ul>
<p><b>32. Սեռական ոտնձգություն դպրոցում. ճանաչել և գործել</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Դպրոցում սեռական ոտնձգության սահմանումը և դրսևորումները</li> <li>• Սեռական ոտնձգությունների մասին Հայաստանի օրենքները</li> <li>• Ինչ կարող են անել աղջիկները, եթե դպրոցում ենթարկվում են սեռական ոտնձգությունների</li> </ul>

### VI. Բռնություն ԼԳԲՏՔԻ անձանց նկատմամբ

<p><b>33. Բռնություն ԼԳԲՏՔԻ անձանց նկատմամբ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• ԼԳԲՏՔԻ+ սահմանումը և կապը մարդու իրավունքների հետ</li> <li>• Բռնության տեսակները, որոնց բախվում են ԼԳԲՏՔԻ անձինք, հատկապես կանայք և աղջիկները</li> <li>• ԼԳԲՏՔԻ անձանց նկատմամբ վերաբերմունք, որից պետք է խուսափել</li> <li>• Բռնության բախվող ԼԳԲՏՔ համայնքի կանանց և աղջիկների համար հասանելի աջակցության ծառայություններ</li> </ul>
---	---

### VII. Կիբերբռնություն

<p><b>34. Ինչպես կանխել և արձագանքել կիբերբռնությանը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Կիբերբռնության սահմանումը և տեսակները</li> <li>• Կիբերբռնության կանխարգելման և դրանց արձագանքման խորհուրդներ</li> </ul>
<p><b>35. Ինչպես կանխել և արձագանքել աշխատավայրում կիբերբռնությանը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Կիբերբռնության դրսևորումները աշխատավայրում</li> <li>• Կիբերբռնության կանխարգելման և դրանց արձագանքման խորհուրդներ</li> </ul>
<p><b>36. Ինչպես կանխել և արձագանքել դպրոցում կիբերբռնությանը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Կիբերբռնության դրսևորումները դպրոցում</li> <li>• Կիբերբռնության կանխարգելման և դրան արձագանքման խորհուրդներ</li> </ul>

### VIII. Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունքներ

<p><b>38. Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունքներ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Սեռական և վերարտադրողական առողջության սահմանում</li> <li>• Սեռական և վերարտադրողական առողջության հետ կապված հիմնական իրավունքները</li> <li>• Սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների խախտման մասին ՀՀ օրենքները</li> </ul>
--	--

<p>39. Դեռահասություն՝ ֆիզիկական և հոգեբանական փոփոխությունների շրջան</p>	<ul style="list-style-type: none"> <li>Դեռահասության սահմանում</li> <li>Ֆիզիկական և հոգեբանական փոփոխություններ, որոնք դիտվում են դեռահաս աղջիկների և տղաների մոտ</li> <li>Որտեղից ստանալ լրացուցիչ տեղեկատվություն</li> </ul>
<p>40. Discovery and management of young girls' feelings of love</p>	<ul style="list-style-type: none"> <li>Երիտասարդ աղջիկների մոտ սիրո զգացմունքների դրսևորում և կառավարում</li> <li>Խորհուրդներ, թե ինչպես կառավարել այս զգացումը, որպեսզի խուսափենք այնպիսի խնդիրներից, ինչպիսիք են սեռական և վերարտադրողական առողջությունը, իրավունքները, բռնությունը և դայրոցական ձախողումները:</li> </ul>
<p>41. Չպլանավորված և անցանկալի հղիությունների կանխում</p>	<ul style="list-style-type: none"> <li>Կանանց և աղջիկների չպլանավորված և անցանկալի հղիության հետևանքները</li> <li>Խորհուրդ ինչպես խուսափել անցանկալի հղիությունից</li> <li>Հասանելի աջակցության ծառայություններ չպլանավորված և անցանկալի հղիություն ունեցող կանանց և աղջիկների համար</li> </ul>
<p>42. Վաղ հղիություն և դրա հետ կապված ազդեցությունները աղջիկների վրա</p>	<ul style="list-style-type: none"> <li>Աղջիկների վաղ հղիության հետևանքները</li> <li>Խորհուրդ, թե ինչպես խուսափել վաղ հղիությունից</li> <li>Հասանելի աջակցության ծառայություններ վաղ հղիություն ունեցող աղջիկների համար</li> </ul>
<p>43. Խորհուրդներ աղջիկներին՝ ինքնագնահատական և վստահություն</p>	<ul style="list-style-type: none"> <li>Ինքնագնահատականի և վստահության կարևորությունն ու օգուտները, ներառյալ սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների համար</li> <li>Որոշ գաղափարներ այն մասին, թե ինչպես կարող են աղջիկները զարգացնել իրենց ինքնագնահատականը և վստահությունը</li> </ul>
<p>44. Ծնողների հետ սեռականության վերաբերյալ շփում</p>	<ul style="list-style-type: none"> <li>Ծնողների հետ սեռականության վերաբերյալ շփվելու առավելությունները</li> <li>Որոշ գաղափարներ այն մասին, թե ինչպես կարող են աղջիկները շփվել իրենց ծնողների հետ սեռականության վերաբերյալ</li> </ul>

**IX. Կանանց և աղջիկների զորեղացում**

<p>45. Կանայք գիտության, տեխնիկայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի բնագավառում (ԳՏԾՍ/STEM).</p>	<ul style="list-style-type: none"> <li>STEM ոլորտների բացատրություն</li> <li>Հայտնի կամ ճանաչված կանանց կամ աղջիկների օրինակներ, ովքեր հաջողության են հասել STEM-ում ամբողջ աշխարհում և Հայաստանում.</li> <li>Կանանց և երիտասարդ աղջիկների՝ STEM-ում ներգրավվածության խոչընդոտները (օրինակ՝ թույլ չտալ նրան զարգացնել բիզնես, թվային կամ STEM հմտություններ)</li> <li>Որոշ հնարավորություններ (օրինակ՝ աշխատանքի ոլորտներ, կրթաթոշակներ, մասնագիտացված դայրոցներ)</li> </ul>
<p>46. Կանայք բիզնեսում և ձեռներեցության հնարավորություններ</p>	<ul style="list-style-type: none"> <li>Հայտնի կամ ճանաչված կանանց կամ աղջիկների օրինակներ, ովքեր Հայաստանում հաջողության են հասել բիզնեսում և ձեռներեցության ոլորտում՝ տարածաշրջանային կամ միջազգային մակարդակով.</li> <li>Հայաստանում առկա հնարավորություններ (օրինակ՝ ֆինանսավորման աղբյուրներ, տեխնիկական աջակցություն կամ քուչինգ)</li> </ul>
<p>47. Կանանց տնտեսական զորեղացման խոչընդոտներ</p>	<ul style="list-style-type: none"> <li>Թյուր պատկերացումներ և վերաբերմունք, որոնք սահմանափակում են կանանց տնտեսական զորեղացումը, այդ թվում՝ թույլ չտալ նրանց զարգացնել բիզնեսի, թվային կամ STEM հմտությունները, թույլ չտալ աշխատանք գտնել, աշխատանքի գնալու կամ աշխատանքը պահպանել, իսկ նրա նպաստը կամ գումարը/եկամուտը նրա կամքին հակառակ, թույլ չտալ նրան բանկային հաշիվ բացել և թույլ չտալ նրան օգտվել սեփական կամ ընտանիքի եկամտից</li> </ul>

**X. Կանանց և դեռահաս աղջիկների մասնակցությունը պետական և մասնավոր ոլորտներում որոշումների կայացմանը**

<p>48. Կանանց և դեռահաս աղջիկների մասնակցությունը ընտրական ընտրական գործընթացներին</p>	<ul style="list-style-type: none"> <li>Կանանց և դեռահաս աղջիկների իրավունքները՝ կապված ընտրական գործընթացների հետ (որպես ընտրողներ, թեկնածուներ, ադմինիստրատորներ, ազգային կամ տեղական ընտրված պաշտոնյաներ)</li> <li>Մարտահրավերներ և հնարավորություններ</li> </ul>
<p>49. Կանանց մասնակցությունը տեղական մակարդակում որոշումների կայացմանը</p>	<ul style="list-style-type: none"> <li>Կանանց և դեռահաս աղջիկների իրավունքները՝ կապված տեղական/համայնքային երկխոսության և համայնքի զարգացման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներին մասնակցելու հետ, ներառյալ կանանց իրավունքներին, հզորացմանը և անվտանգությանը վերաբերող հարցերին:</li> <li>Մարտահրավերներ և հնարավորություններ</li> </ul>
<p>50. Կանանց մասնակցությունը մասնավոր/ընտանեկան ոլորտում որոշումների կայացմանը</p>	<ul style="list-style-type: none"> <li>Մասնավոր/ընտանեկան ոլորտում որոշումների կայացմանը կանանց մասնակցության հետ կապված հարցեր</li> <li>Խորհուրդներ կանանց մասնակցության վերաբերյալ համատեղ և խաղաղ ընտանեկան որոշումների կայացմանը (օրինակ՝ երեխաների, կրթության և ընտանիքի եկամտի ծախսերի վերաբերյալ)</li> </ul>



## ՎԵՐՋՆԱԿԱՆ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ

Safe YOU հավելվածի բովանդակությունը և բարելավումները մշակելիս գործընթացում պետք է ներգրավվեն վերջնական օգտատերերը: Հավելվածի միջոցով կարճ հարցումը կարող է ներգրավել օգտատերերին որպես հավելվածի գնահատողներ, և նրանք կարող են նոր թեմաներ առաջարկել և բարելավել ընթացիկ բովանդակությունը:

### Օգտատերերի հարցման բովանդակության օրինակ

Հարգելի օգտատեր,

Շնորհակալություն Safe YOU հավելվածը օգտագործելու համար: Թիմը շարունակաբար աշխատում է բարելավելու բովանդակությունը՝ ձեր կարիքները բավարարելու համար: Մենք կցանկանայինք ձեզանից լսել հետևյալը.

- 1-ից մինչև 5 աստղ (վատից գերազանց), ինչպե՞ս եք գնահատում Safe YOU հավելվածը:



- Ինչ թեմաների անդրադարձ կցանկանայիք տեսնել Safe YOU հավելվածում:

Շնորհակալություն մասնակցության համար:

Հարցման արդյունքները կներառեն նոր և նախկինում Safe YOU-ում արծարծված թեմաներ, քանի որ նոր օգտվողներ են ներբեռնում հավելվածը: Ի հավելումն նոր բովանդակության հրապարակմանը, Safe YOU-ի թիմը պետք է վերանայի և թարմացնի նախկինում տեղադրված նյութերը՝ հիմնվելով առաջին հրապարակման պահից ստացված նոր զարգացումների և մեկնաբանությունների վրա:

ԱՆԻ-ի հետ քննարկումներ են շարունակվում՝ ավելացնելու գործառույթ, որը կհավաքի վիճակագրություն բովանդակության դիտումների և մեկնաբանությունների վերաբերյալ: Այս չափումները կարող են հետադարձ կապ ապահովել որոշակի թեմատիկ ոլորտների պահանջարկի վերաբերյալ:

## ԳԲ-ԻՑ ԶԱՏ ԹԵՄԱՆԵՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄ

Թեև Safe You-ն նպատակ ունի անդրադառնալ գենդերային բռնությանը, հավելվածը կարող է չմտածված վնաս պատճառել, եթե այն տեսնեն բռնություն գործադրողները իրենց գոհի հետախուսում: Եթե հավելվածն ունենար արագ «թաքնվելու»

հնարավորություն լայնածավալ բովանդակության մեջ, ապա դա կխրախուսի կանանց և դեռահաս աղջիկներին օգտագործել Safe You-ն՝ առանց վախենալու, որ այն տեսանելի կլինի:

Թեմաների բազմազանությունը կարող է հանգեցնել, որ կանայք և դեռահաս աղջիկները հետաքրքրության այլ ոլորտներ գտնեն: Օրինակ, վերարտադրողական առողջության կամ կանանց գորեղացման մասին տեղեկությունները կարողալիս օգտատերերը կարող են ուղղորդվել դեպի ԳԲ և աջակցության ծառայությունների մասին տեղեկատվություն:

## ԹԵՄԱՆԵՐ, ՈՐՈՆՑԻՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԽՈՒՍԱՓԵԼ

Այս ուղեցույցի պատրաստման ժամանակ անցկացված հարցման մասնակիցներն ընդգծել են երեք թեմա, որոնցից պետք է զգուշանալ: Դրանք, լավ մշակված լինելու դեպքում, կարող են ընդունվել որպես օգտվողներին ավելի զգայունացնելու հնարավորություն:

i. **Կրոնական, սնահավատ և դավադրապաշտությանն առնչվող թեմաներ**  
Այս թեմաները զգայուն են և կարող են կառուցողական չլինել բջջային հավելվածում:

ii. **Հաշտեցում բռնարար զուգընկերոջ հետ:**  
Հաշտեցումը որպես այդպիսին չպետք է բացառվի, քանի որ դա հաճախ շատ բ ընտրություննունության ենթարկվածների ընտրությունն է: Պարտադիր չէ, որ կանայք ձգտեն բաժանվել իրենց զուգընկերոջից, նրանք հաճախ պարզապես ցանկանում են, որ նա փոխվի և դադարի իրեն բռնության ենթարկել: Կոալիցիան և Safe YOU թիմը կարող են դիտարկել բովանդակություն ստեղծումը՝ աջակցելու կանանց, ովքեր հաշտության են ձգտում իրենց զուգընկերների հետ:

iii. **Գենդերային բռնության արդարացում**  
ԳԲ արդարացումը հաճախ հիմնված է գենդերային կարծրատիպերի և տղամարդկանց և կանանց դերերի և պարտականությունների վերաբերյալ մշակութային և սոցիալական նորմերի վրա: Կոալիցիան և Safe YOU թիմը կարող են ստեղծել հաղորդակցության վրա հիմնված վարքագծային փոփոխության բովանդակություն՝ կրթելու նրանց, ովքեր կարծում են, որ ԳԲ-ը արդարացված է:



## ՎԻՐՏՈՒԱԼ ՉՐՈՒՅՑՆԵՐ

Safe YOU-ն իր օգտատերերին առաջարկում է տեղեկատվական և ցանցային հարթակ մասնագետների և ԳԲ փորձագետների հետ: Հավելվածի գրավչությունը մեծացնելու և օգտատերերի կարիքներին ավելի լավ արձագանքելու համար կարող են դիտարկվել փորձագետների հետ թեմատիկ վիրտուալ վեբինարներ: Դրանք կարող են պարբերաբար կազմակերպվել մեկից մեկուկես ժամ տևողությամբ: Բովանդակությունը կարող է ներառել այս ուղեցույցում առաջարկվող թեմաները և առաջարկներ Safe YOU օգտատերերից: Այս ուղղակի փոխազդեցությունը բջջային հավելվածին այլ դինամիկա կհաղորդի: Մա չի խանգարի քննարկումների ֆորումների միջոցով կանոնավոր հաղորդակցությանը, որը պետք է շարունակվի:

## ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ

ԳԲ խնդիրների մասին իրազեկությունը բարձրացնելու համար հավելվածի միջոցով կարելի է կարճ տեսանկյունի պատրաստել և տարածել: Տեսանկյունի բովանդակությունը կարող է ներառել մասնագետի, որը ներկայացնում է թեմա կամ խնդիր և պատասխանում է Safe YOU թիմի կողմից նախապես հավաքված օգտատերերի հարցերին: Հարցերի համար, որոնց պատասխանը հնարավոր չէ, ներկայացնողը կարող է օգտատերերին ուղղորդել դեպի լրացուցիչ ռեսուրսներ և, հնարավորության դեպքում, ներկայացնել դրանք հավելվածում:

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

